30 ապրիլի 2020 թվականի N 661 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի N 634-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 23-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 634-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 1-ին կետի «ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը» սյունակում «8705 40 000 1» ծածկագիրը փոխարինել «8705 40 000 5» ծածկագրով, իսկ «Անվանումը» սյունակում «Հատուկ նշանակության շարժիչային տրանսպորտային միջոցներ (օրինակ՝ բեռնատար մեքենաներ

վթարները վերացնելու համար, ավտոամբարձիչներ, հրշեջ տրանսպորտային միջոցներ, ավտոբետոնախառնիչներ, ճանապարհները մաքրող մեքենաներ, ջրող-լվացող ավտոմոբիլներ, ավտոարհեստանոցներ, ռենտգենյան կայանքներով ավտոմոբիլներ)՝ բացի ուղևորներ կամ բեռներ փոխադրելու համար օգտագործվող տրանսպորտային միջոցներից՝ նոր» բառերը փոխարինել «Հատուկ նշանակության շարժիչային տրանսպորտային միջոցներ (օրինակ՝ բեռնատար մեքենաներ վթարները վերացնելու համար, ավտոամբարձիչներ, հրշեջ տրանսպորտային միջոցներ, ավտոբետոնախառնիչներ, ճանապարհները մաքրող մեքենաներ, ջրող-լվացող ավտոմոբիլներ, ավտոարհեստանոցներ, ռենտգենյան կայանքներով ավտոմոբիլներ)՝ բացի ուղևորներ կամ բեռներ փոխադրելու համար օգտագործվող տրանսպորտային միջոցներից՝ շահագործված» բառերով.

2) 5-րդ կետի «Քանակը» սյունակում «10» թիվը փոխարինել «20» թվով, իսկ «Արժեքը» սյունակում «450 000 000» թիվը՝ «990 000 000» թվով.

3) 10-րդ կետի «Քանակը» սյունակում «10» թիվը փոխարինել «20» թվով, «Արժեքը» սյունակում «350 000 000» թիվը՝ «550 000 000» թվով, իսկ «Ծագման երկիրը» սյունակը «Ճապոնիա» բառից հետո լրացնել «Շվեդիա» բառով.

4) 13-րդ կետի «Քանակը» սյունակում «12» թիվը փոխարինել «24» թվով, իսկ «Արժեքը» սյունակում «700 000 000» թիվը՝ «1 500 000 000» թվով.

5) 19-րդ կետի «Քանակը» սյունակում «7» թիվը փոխարինել «14» թվով, իսկ «Արժեքը» սյունակում «84 000 000» թիվը՝ «180 000 000» թվով.

6) հավելվածը 32-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 33-րդ կետով.

«

33.	8429110010	Բուլդոզերներ (մղաններ)՝ ոչ դարձկեն և դարձկեն հարթաշերեփով, ուղեհարթիչներ ու հարթիչներ, կեռաշերեփներ (սկրեպերներ), մեխանիկական թիեր, էքսկավատորներ, միաշերեփ բեռնիչներ, տոփանիչ մեքենաներ, ճանապարհային գլանիվներ, ինքնագնաց բուլդոզերներ՝ ոչ դարձկեն և դարձկեն 250 լ/վ –ից ավելի հզորությամբ	250 լ/վ-ից ավելի հզորություն	հատ	3	Բուլղարիա, Նիդերլանդներ, Գերմանիա, Բելգիա, Իտալիա, Չեխիա, Ֆրանսիա, Լեհաստան, Թուրքիա, Կորեա, ԱՄՆ, Ճապոնիա, Իսպանիա, Շվեդիա	200 000 000

».

7) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «5 050 000 000» թիվը փոխարինել «6 886 000 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2020 թ. մայիսի
Երևան